ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6538-2019 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5740 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը 03.04.2019թ. թիվ 01/61-5740 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի (այսուհետ Ընկերություն) միջև 21.06.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ18/26-1» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1 ին փուլի համար՝ մինչև 31.07.2018 թվական և 2 րդ փողի համար՝ մինչև 20.08.2018 թվական:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի»:

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները իրականացվել են թերի, այն է՝ 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ապրանքները չեն մատակարարվել ամբողջությամբ և սահմանված ժամկետում:

Վերը նշվածի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի ընդհանուր գումարից՝ 37068018 (երեսունյոթ միլիոն վաթսունութ հազար տասնութ) ՀՀ դրամ, ընկերությանը վճարվել է 30584461 (երեսուն միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հորվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից»:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել նախատեսված ստանձնած պարտակորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:»:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, Երևանի քաղաքապետարանն առաջարկել է «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

3. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 25.04.2019թ. գրությամբ դիմել է «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6538-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«2018թ. հունիսի 21-ին <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), համաձայն Պայմանագրի գնման ժամանակացույցի՝ մատակարարումները նախատեսվել են մինչև 2018 թվականի օգոստոսի 20-ը:

Այնուհետև, <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև՝ <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրի արդյունքում գնման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն և մատակարարումը երկարաձգվել է 30 օրացուցային օրով (մինչև սեպտեմբերի 20):

<<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ից պահանջվել են կատարել մատակարարումները նաև 2018թ. սեպտեմբերի 20-ից հետո՝ /20.12.2018թ. թիվ 7 արձանագրություն, 25.12.2018թ. թիվ 8 արձանագրություն, 30.01.2019թ. թիվ 9 արձանագրություն, 31.01.2019թ. թիվ 10 արձանագրություն, 08.02.2019թ. թիվ 11 արձանագրություն:

<<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ն 2019թ. փետրվարի 13-ի գրությամբ /կցվում է/ դիմել է Երևանի քաղաքապետարանին, որով խնդրել է տալ հանձնարարական գործընթացը շարունակելու, Ընկերությանը հնարավորություն ընձեռելու ամբողջությամբ կատարելու իր պայմանագրային պարտավորությունները և դրանց դիմաց Գնորդի կողմից ֆինանսնավորում իրականացնելու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 22.03.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված՝ <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 22.03.2019թ.

միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 կետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի):

<<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Գնորդն թականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա.

<<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումն նախատեսվել է ն 2018թ. օգոստոսի 20-ին:

Սակայն արդեն <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագրի շրջանակում կնքված համաձայնագրի համաձայն՝ մատակարարման ժամկետները երկարաձգվել են 30 օրացուցային օրով, այսինքն մինչև 2018թ. սեպտեմբերի 20-ը:

Միևնույն ժամանակ ապրանքի մատակարարումները շարունակվել են 20.12.2018թ., 25.12.2018թ., 30.01.2019թ., 31.01.2019թ., 08.02.2019թ., որոնց հավաստման համար Պայմանագրի համաձայն կազմվել են համապատասխան արձանագրություններ /կցվում են/:

Ավելին՝ 20.12.2018թ. և 25.12.2018թ. ապրանքների մատակարարման համար Երևանի քաղաքապետարանի կողմից արդեն իսկ կատարվել են համապատասխան վճարումներ՝ ապրանքի մատակարարման ժամկետների ուշացման համապատասխան տույժերը հաշված:

Իսկ 30.01.2019թ., 31.01.2019թ. և 08.02.2019թ. ապրանքի մատակարարման վճարումները Երևանի քաղաքապետարանի կողմից մինչ օրս չեն իրականացվել, մինչդեռ առկա են համապատասխան արձանագրությունները և կից փաստաթղթերը:

Այսպիսով, պայմանագրի կատարման փուլում Պատվիրատուն հաշվի չառնելով, որ մատակարարման ժամկետը ուշացվել է սահմանված 20 օրացուցային օրից ավել, շարունակել է Ընկերությունից պահանջել մատակարարումները, ավելին, 30.01.2019թ., 31.01.2019թ. և 08.02.2019թ. մատակարարված ապրանքի համար մինչ օրս չի կատարել սահմանված վճարումները՝ դրանով իսկ խախտելով Պայմանագրի 2.3.2 կետը, այսինքն թույլ է տվել Պայմանագրի էական խախտում:

Վերոնշված փաստական հանգամանքները փաստում են, որ ապրանքի մատակարարման վերջնաժամկետի ավարտից հետո, այն է 2018թ. սեպտեմբերի 20-ը՝ <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ն շարունակել է <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարել ապրանքներ, որը Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունվել են և մի մասով կատարվել են վճարումներ, իսկ մատակարարած մեծաքանակ ապրանքների համար վճարումներ ընդհանրապես չեն կատարվել:

Անհասկանալի է դառնում, թե ինչու Երևանի քաղաքապետարանի կողմից 2019թ. մարտի 22 միակողմանի լուծվել է պայմանագիրը՝ այն էլ 2.1.7 կետի հիմքով, որով նախատեսվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե սահմանված 20 օր ուշացումից հետո անցել է 6 ամսից ավել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Երևանի քաղաքապետարանը 2019թ. մարտի 22-ին իրավունք չուներ միակողմանի լուծել պայմանագիրը՝ պայմանագրի 2.1.7 կետի ուժով, քանի որ ըստ համաձայնագրի՝ ապրանքի մատակարարման ժամկետը ավարտվում է սեպտեմբերի 20-ին և եթե Երևանի քաղաքապետարան գտնում էր, որ <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի, ապա <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագիրը պետք է լուծվեր 2018թ. հոկտեմբեր ամսին, այլ ոչ թե 6 ամիս անց:

Տպավորություն է ստեղծվում, որ Երևանի քաղաքապետարանը լուծել է <<ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1>> ծածկագրով պայմանագիրը այն ժամանակ, երբ Ընկերությունը, այդ թվում նաև գրավոր, պահանջել է կատարել մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված երեք խմբաքանակ ապրանքի համար, հակառակ դեպքում խոսափանալով միակողմանի լուծել պայմանագիրը և դիմել դատարան՝ մատակարարած ապրանքի դիմաց վճարում պահանջելու խնդրանքով: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանը, ինքը թույլ տալով պայմանագրի էական խախտում՝ վճարումներ կատարելու մասով, կարծես թե, վճարումից հրաժարվելու համար ինքն է որպե առաջ միակողմանի լուծել պայմանագիրը՝ ժամկետը խախտելու հմքով: Մինչդեռ, մինչև Ընկերության կողմից

վճարումներ չպահանջելը Պավիրատուի համար ուշացումը, կարծես թե ընդունելի էր, և Պատվիրատուն շարունակում էր տալ պատվերներ և ընդունել պատվիրված ապրանքը:

Վերոհիշյալի արդյունքում Երևանի քաղաքապետարանը ոչ միայն ինքն է թույլ տվել նշված պայմանագրի էական խախտում՝ չվճարելով մատակարարված և ընդունած ապրանքի դիմաց, այլ նաև միակողմանի լուծելով պայմանագիրը՝ <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ին կանգնեցրել է <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու վտանգի առջև:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ հենց պայմանագիրը միակողմանի լուծող կողմը՝ Երևանի քաղաքապետարանը, թույլ է տվել պայմանագրի էական խախտում, սակայն այս գործի շրջանակներում միայն <<Տ-Ինդասթրի>> ՓԲԸ-ին է փորձում ներկայացնել որպես պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում թույլ տված կողմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:»:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել են հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Երևանի քաղաքապետարանի և «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի (այսուհետ Ընկերություն) միջև 21.06.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ18/26-1» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին փուլի համար՝ մինչև 31.07.2018 թվականը և 2-րդ փուլի համար՝ մինչև 20.08.2018 թվականը: Թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով Պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրի արդյունքում գնման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն և մատակարարումը երկարաձգվել է 30 օրացուցային օրով (մինչև սեպտեմբերի 20-ը):

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն մատակարարումներ է կատարել նաև 2018թ. սեպտեմբերի 20-ից հետո՝ (20.12.2018թ. թիվ 7 արձանագրություն, 25.12.2018թ. թիվ 8 արձանագրություն, 30.01.2019թ. թիվ 9 արձանագրություն, 31.01.2019թ. թիվ 10 արձանագրություն, 08.02.2019թ. թիվ 11 արձանագրություն):

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն 2019թ. փետրվարի 13-ի գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին, որով խնդրել է տալ հանձնարարական գործընթացը շարունակելու, Ընկերությանը հնարավորություն ընձեռելու ամբողջությամբ կատարելու իր պայմանագրային պարտավորությունները և դրանց դիմաց Գնորդի կողմից ֆինանսնավորում իրականացնելու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 22.03.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 22.03.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 կետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի):

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները իրականացվել են թերի, այն է՝ 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ապրանքները չեն մատակարարվել ամբողջությամբ և սահմանված ժամկետում:

Գնորդի կողմից պայմանագրի ընդհանուր գումարից՝ 37՛068՛018.00 (երեսունյոթ միլիոն վաթսունութ հազար տասնութ) ՀՀ դրամ, ընկերությանը վճարվել է 30՛584՛461.00 (երեսուն միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6538-2019 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Երևանի քաղաքապետարանի և «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի միջև 21.06.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ18/26-1» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին փուլի համար՝ մինչև 31.07.2018 թվական և 2 րդ փուլի համար՝ մինչև 20.08.2018 թվական:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը

դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից»:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

2018թ. հունիսի 21-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումները նախատեսվել են մինչև 2018 թվականի օգոստոսի 20-ը: Թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով Պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրի արդյունքում գնման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն և մատակարարումը երկարաձգվել է 30 օրացուցային օրով (մինչև սեպտեմբերի 20):

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26-1» ծածկագրով Պայմանագիրը Պատվիրատուի կողմից 22.03.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 կետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի):

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն մատակարարումներ է կատարել նաև 2018թ. սեպտեմբերի 20-ից հետո՝ (20.12.2018թ. թիվ 7 արձանագրություն, 25.12.2018թ. թիվ 8 արձանագրություն, 30.01.2019թ. թիվ 9 արձանագրություն, 31.01.2019թ. թիվ 10 արձանագրություն, 08.02.2019թ. թիվ 11 արձանագրություն):

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն 2019թ. փետրվարի 13-ի գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին, որով խնդրել է տալ հանձնարարական գործընթացը շարունակելու, Ընկերությանը հնարավորություն ընձեռելու ամբողջությամբ կատարելու իր պայմանագրային պարտավորությունները և դրանց դիմաց Գնորդի կողմից ֆինանսավորում իրականացնելու համար:

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները իրականացվել են թերի, այն է՝ 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ապրանքները չեն մատակարարվել ամբողջությամբ և սահմանված ժամկետում:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն փաստում է, որ թեև Պայմանագրում առկա են ապրանքների մատակարարման հստակ ժամկետներ, ու դրանք Ընկերության կողմից խախտվել են, սակայն, հենց նույն Պայմանագրում բացի ժամկետներից, հստակ սահմանվել է նաև Պայմանագրի կատարման վայրը՝ *«ըստ պահանջի»* նշումով: Նման պայմաններում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից ապրանքի մատակարարման վայրի պահանջ չներկայացնելը չէր կարող հնարավորություն տալ Ընկերությանը՝ ապրանքներ սահմանված ժամանակացույցի մատակարարելու համար:

Այսինքն, վերը նշված պատճառաբանությամբ և հիմք ընդունելով Ընկերության և մանկապարտեզների տնօրենների միջև կնքված հանձնման-ընդունման ակտերը, պետք է փաստել, որ թեև Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները իրականացվել են թերի (4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ապրանքները չեն մատակարարվել ամբողջությամբ և սահմանված ժամկետում), սակայն Ընկերությունը մատակարարումը կարող էր իրականացնել միայն այն ժամանակ, երբ Պատվիրատուն կներկայացներ այդպիսի պահանջ՝ նշելով մատակարարման վայրը:

Ընդ որում, հիմք ընդունելով Ընկերության՝ Պատվիրատուին ուղղված գրությունը ու դրանից հետո կատարած մատակարարումների (հանձնման-ընդունման) փաստը, պետք է արձանագրել, որ Պատվիրատուն, ըստ էության, չի առարկել ապրանքների՝ Պայմանագրով սահմանված ժամկետներից հետո իրականացնելուն՝ ընդունելով այն և դրանց դիմաց կատարելով համապատասխան վճարումներ:

Վերոնշյալի մասին են վկայում նաև այն հանգամանքները, համաձայն որոնց՝ ապրանքների մատակարարման պահանջը եթե ներկայացվեր ըստ Պայմանագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան ու վերջիններս մատակարարված չլինեին, ապա ապրանքը Պատվիրատուն չէր ընդունի, հանձնման-ընդունման ակտ չէր ստորագրվի և Պայմանագիրն էլ միակողմանիորեն կլուծվեր, ոչ թե 2019թ. մարտին, այլ 2018թ. հոկտեմբերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ կողմից ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել Պատվիրատուի կողմից Պայմանագրում մատակարարման վայրը ոչ հստակ՝ «ըստ պահանջի» նշած լինելու արդյունքում: Նման պայմաններում պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

Ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6538-2019 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ